DOI: https://doi.org/10.46991/FLHE/2024.28.1.150

Զարուհի ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ*
*Երևանի պետական համալսարան*

# ԱՆԳԼԵՐԵՆ “SUCCESS” ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

*Սույն հոդվածում քննարկվում է «հասկացույթ» եզրույթի դերն ու նշանակությունը ժամանակակից լեզվաբանության մեջ: Հաշվի առնելով հասկացույթների ուսումնասիրության տեսական հիմքը, հոդվածում քննարկվում է «հաջողություն» լեզվամշակութային հասկացույթի իմաստային բովանդակությունը: Հետազոտության նյութը տարբեր դարաշրջանների ամերիկացի և բրիտանացի նշանավոր անձանց կողմից ներկայացվող «հաջողություն» հասկացույթի սահմանումներն ու մեկնաբանություններն են: Ուսումնասիրության արդյունքում ներկայացվում է «հաջողություն» լեզվամշակութային հասկացույթի իմաստաբովանդակային բնութագիրը, որը ենթադրում է մի շարք հատկանիշներ, ինչպիսիք են՝ խիզախությունը, հաստատակամությունը, հետևողականությունը՝ ապահովելով բարեկեցություն, համբավ և բարգավաճում: «Հաջողություն» բառի բառարանային նշանակությունների և «հաջողություն» հասկացույթի սահմանումների վերլուծությունն ու իմաստային բովանդակության բացահայտումը հիմնվում են «հաջողություն» բառի շարակարգային առանձնահատկությունների ուսումնասիրության և հասկացույթի ճանաչողական հատկանիշների վերլուծության վրա:*

***Բանալի բառեր.*** *«հաջողություն» հասկացույթ, լեզվամշակութային հասկացույթ, բառարանային սահմանում, իմաստային բովանդակություն, շարակարգային առանձնահատկություններ, ճանաչողական հատկանիշներ, հաջողության բանաձև*

## Ներածություն

“Success” հասկացույթը այն եզակի բառերից է, որը կիրառելի է բազմաթիվ ոլորտներում որպես ձեռքբերման, առաջխաղացման և նպատակների իրականացման խորհրդանիշ: Բառի առանցքային դերն ու կարևո-

* vartapetianzarouhi@ysu.am ORCID: 0009-0002-1045-974X

Received: 27/03/2024
Revised: 10/05/2024
Accepted: 30/05/2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

րությունն արտացոլվում են զանազան իրավիճակներում՝ նշանավորելով հաղթանակ, նվաճում, արժանիքների ճանաչում և գնահատում:

Հոդվածում փորձ է արվում վեր հանել “success” հասկացույթի բովանդակությունը ամերիկյան և բրիտանական ընկալմամբ: Ընդհանրապես հաջողության մասին մարդկանց պատկերացումներն ու ընկալումները կարող են տարբերվել՝ պայմանավորված լեզվամշակութային, սոցիալական, քաղաքական, հոգեբանական գործոններով և առանձնահատկություններով: Աշխարհայացքի և աշխարհընկալման տարբերություններն իրենց ազդեցությունն են ունենում տարբեր երևույթների՝ հասկացույթների ճանաչողական ընկալման և դրանց բովանդակության մեկնաբանման վրա:

Ուստի հասկացույթներն ուսումնասիրելիս, բառի բառարանային նշանակություններից զատ, հաշվի են առնվում ազգային, պատմական և մշակութային փորձը, ինչպես նաև լեզվամշակութային առանձնահատկությունները:

Ինչպես նշում է Վ. Ա. Մասլովան, 21-րդ դարում լեզվաբանության մեջ ակտիվորեն զարգանում է այն ուղղությունը, ըստ որի լեզուն դիտարկվում է որպես ազգի մշակութային կոդ և ոչ զուտ հաղորդակցման և ճանաչողության գործիք: Ազգի մշակութային բոլոր նրբություններն արտացոլվում են տվյալ լեզվում: Մարդը ապրում է հասկացույթներով, որոնք ստեղծել է՝ բավարարելու իր մտավոր, հոգևոր և սոցիալական պահանջմունքները (Маслова, 2001, էջ 4):

Ըստ Վ. Ի. Կարասիկի, հասկացույթը որպես բազմաչափ իմաստային կառույց լեզվամշակութաբանության հիմնական միավորն է, որն առանձնանում է իր արժեքային, փոխաբերական և հայեցակարգային կողմերով: Իրականության արտացոլումը հասկացույթներով իրականացվում է հատկորոշման, արտահայտման և նկարագրման միջոցով: Նախ և առաջ, երևույթը հատկորոշվում է մեզ շրջապատող իրականության մեջ, որից հետո լեզվական և ոչ լեզվական միջոցների կիրառմամբ արտահայտվում, հաղորդվում և հստակեցվում է հասկացույթի բովանդակությունը: Ապա ներկայացվում է հասկացույթի նկարագիրը սահմանումների, համատեքստի վերլուծության, ստուգաբանման և լեզվական նյութի մեկնաբանման միջոցով (Карасик, 2002, էջ 91-92):

Հաշվի առնելով այն, որ հասկացույթները ձևավորում են որոշակի մշակութային շերտ, որն առկա է մարդու և իրեն շրջապատող աշխարհի միջև՝ հետազոտողներն ուսումնասիրում են տարբեր ժամանակաշրջանների և ժողովուրդների մշակույթներում արտացոլվող առանցքային հասկացույթները: Նրանք նկարագրում են և ուսումնասիրում այսպես կոչված աշխարհայացքային հասկացույթները: Հասկացույթները հանդես են գալիս որպես մշակույթի մարմնավորման ձևեր մարդու գիտակցության մեջ: Բառի բառարանային նշանակությունը կազմում է տվյալ հասկացույթի միջուկը: Գործնականում բոլոր լեզվամշակութաբանները կիսում

են այն տեսակետը, որ հասկացույթը բարդ կառուցվածքային միավոր է: Լեզվամշակութային հասկացույթը մարդու հուզական-գնահատողական մոտեցումներն ու պատկերացումներն են որևէ երևույթի վերաբերյալ, որոնք առկա են մարդու գիտակցության մեջ՝ պայմանավորված մշակութային գիտելիքներով: Խորքային ուսումնասիրությունը թույլ է տալիս վեր հանել լեզվի և մտածողության, բառի և հասկացույթի միջև եղած փոխադարձ կապը (Ефремов, 2009, էջ 100-101):

Հասկացույթի իմաստային նկարագիրը կազմում են երեք կառուցվածքային բաղկացուցիչները՝ հասկացույթի սահմանումը, փոխաբերական իմաստը, հասկացույթը բառային-քերականական համակարգում, այդ թվում ստուգաբանությունը և այլ բնութագրեր (Воркачев, 2002, էջ 81):

Հասկացույթների վերլուծությունը կարևորվում է այն առումով, որ լեզվաբանության ուսումնասիրության դաշտ են ներթափանցել տրամաբանությունը, հոգեբանությունը, սոցիոլոգիան, էթնոգրաֆիան և այլ գիտաճյուղեր (Карасик, 1991, էջ 3):

Մյուս կողմից, լեզվաբանությունն այսօր մասամբ փոփոխության է ենթարկվում լեզվի նոր ընկալման ազդեցության ներքո: Լեզուն դիտարկվում է որպես ճանաչողական գործընթաց և ճանաչողական երևույթ, որի արդյունքում ճանաչողական գիտությունն առնչվում է լեզվաբանության մի շարք ոլորտների հետ՝ դրսևորելով լեզվական տարբեր երևույթների ուսումնասիրության նոր մոտեցումներ՝ կապված լեզվամիավորների նշանակության, նրանց դասակարգման և խոսքում գործածության հետ (Кубрякова, 2004, էջ 31):

Ինչպես նշում են Զ. Դ. Պոպովան և Ի.Ա. Ստերնինը, ճանաչողական լեզվաբանության առանցքային հասկացությունը հենց հասկացույթն է (Попова, Стернин, 2007, էջ 21): Ճանաչողական լեզվաբանության մեջ երևույթներ արտացոլող ճանաչողական կառույցները ձևավորում են արտալեզվական և մասնավորապես լեզվական երևույթների մասին գիտելիքների և պատկերացումների ամբողջություն, ինչպես օրինակ՝ պատմական իրադարձությունների, իրական անձանց, բնության օրենքների, արվեստի գործերի, գրական ստեղծագործությունների մասին: Իսկ լեզվական ճանաչողական կառույցները գտնվում են լեզվի և խոսքի իրավասության ներքո՝ ձևավորելով լեզվի կանոնների, շարահյուսական կառույցների, բառապաշարի, հնչյունաբանության և լեզվամիավորների գործառույթների մասին գիտելիքների ամբողջություն: Ուստի իմաստային առումով հասկացույթն առանձին համապարփակ միավոր է, ինչպես նաև ազգի մշակույթն արտացոլող մտածողության կամ հիշողության միավոր (Попова, Стернин, 2007, էջ 24):

Համապատասխան հասկացույթների նկարագրումը, ինչպես նաև համապատասխան հաղորդակցական հատկանիշների բնութագրումը լեզվաճանաչողական հետազոտությունների նպատակն է, որը թույլ է տալիս բացահայտել հասկացույթի բովանդակությունն այն կերպ, ինչպես

այն արտացոլված է լեզվում (Попова, Стернин, 2007, էջ 54): Զ. Դ. Պոպովան և Ի. Ա. Ստերնինը անդրադառնալով հասկացույթի և նրա նշանակության հարաբերակցությանը՝ նշում են, որ երկուսն էլ հավասարապես արտացոլում են իրականությունը՝ թե՛ օբյեկտիվ և թե՛ սուբյեկտիվ: Հասկացույթը և իր նշանակությունը ճանաչողական բնույթ են կրում՝ հանդիսանալով իրականության ճանաչման արդյունք: Ճանաչողական հատկանիշներն իրենց հերթին ձևավորում են հասկացույթի բովանդակությունը և արտացոլում իրականության որոշակի կողմերը (Попова, Стернин, 2007, էջ 64):

**“Success” հասկացույթը որպես լեզվաբանության ուսումնասիրության առարկա**

Հաշվի առնելով հասկացույթի դերն ու կարևորությունը ժամանակակից լեզվաբանական ուսումնասիրություններում, սույն հոդվածում քննարկվում է “success” լեզվամշակութային հասկացույթի իմաստակառուցվածքային և իմաստաբովանդակային առանձնահատկությունները: “Success” հասկացույթի ընտրությունը պատահական չէ, քանի որ բոլոր ժամանակներում հաջողությունը համարվել է որպես առաջնահերթություն՝ ձեռքբերումների և հաղթանակների հասնելու ճանապարհին:

Հոդվածում մասնավորապես քննարկվում են “success” հասկացույթի սահմանումն ու մեկնաբանումը տարբեր ոլորտների նշանավոր անձանց կողմից, ինչպես նաև նրանց կողմից ներկայացվող հաջողության հասնելու գաղտնիքներն ու եղանակները:

Անհնարին է պատկերացնել ժամանակակից աշխարհն առանց հաջողության բանաձևի: Տնտեսական, քաղաքական զարգացումների, հասարակական հարաբերությունների, բարդ աշխարհաքաղաքական գործընթացների հիմքում ընկած է հաջողությունը: Այն կարևորվել է մարդկության պատմության բոլոր ժամանակներում, հասարակական կյանքում՝ հաշվի առնելով անհատների կյանքի փորձն ու առաջընթացի միտումները:

«Հաջողություն» երևույթը բազմաբնույթ է՝ այն առկա է շարքային քաղաքացու առօրյա կյանքում, կրթության, գիտության և մշակույթի ոլորտներում, հանրային քաղաքականության մեջ, գործարար կյանքում, ընտրական գործընթացներում, սոցիալական բարեփոխումներում, հակակոռուպցիոն պայքարում և այլն:

Բոլոր ժամանակներում անհատները և հասարակությունները ձգտել են հաջողության ձեռքբերման, առկա մարտահրավերների հաղթահարման և կարևորագույն նպատակների իրականացման: Մտադրությունների և նպատակների իրագործման ճանապարհին նշանակալի դեր ունի անհատի և ձեռնարկվող գործի հաջողությունը: Ուստի այն հան-

դիսանում է հոգեբանության, մշակութաբանության և, անկասկած, լեզվաբանության ուսումնասիրության առարկա:

Հոդվածում առաջ քաշվող հիմնական նպատակի իրականացումը ենթադրում է, նախ և առաջ, "success" բառամիավորի բառարանային սահմանումների և շարակարգային առանձնահատկությունների ուսումնասիրություն:

"Success" բառը ծագել է 16-րդ դարի կեսերին լատիներեն successus գոյականից և succedere բայից, որը նշանակել է մոտենալ ինչ-որ բանին կամ գնալ ինչ-որ բանի ետևից:

Ըստ բառարանային սահմանումների "success" բառը նշանակում է հաջողություն, ձեռքբերում, առաջխաղացում, առաջընթաց, ինչպես նաև դրական արդյունք, որն արժանի է հասարակական ճանաչման, հավանության և գնահատականի: Այս երկու նշանակություններն են մասնավորապես ներառված հետևյալ բառարաններում՝ Oxford Advanced Learner's Dictionary, Cambridge Dictionary, New Webster's Dictionary and Thesaurus of the English Language:

Oxford Advanced Learner's Dictionary-ում "success" բառն ունի երկու նշանակություն՝

1. the fact that you have achieved something that you want and have been trying to do or get; the fact of becoming rich or famous or of getting a high social position;
2. a person or thing that has achieved a good result and been successful.

Cambridge Dictionary-ում "success" բառը ևս ունի երկու նշանակություն՝

1. the achieving of the results wanted or hoped for;
2. something that achieves positive results.

New Webster's Dictionary and Thesaurus of the English Language բառարանում "success" բառի նշանակությունները թվով երեքն են, թեև իմաստները լիովին նույնն են ինչպես նախորդ բառարաններում՝

1. the accomplishment of what is desired or aimed at, achievement;
2. attainment of wealth, fame, prosperity, etc.;
3. a person who or thing which succeeds.

Քննարկվող բոլոր բառարաններում "success" բառի սահմանումները համընկնում են: Բառարաններում նաև տրված են "success" բառի գործածության մի շարք օրինակներ: Հետևյալ օրինակներում "success" բառը հանդես է գալիս իր առաջին նշանակությամբ, այն է «հաջողություն, ձեռքբերում, հաղթանակ, բարգավաճում, առաջխաղացում, առաջընթաց»՝

- The success of almost any project depends largely on its manager.
- Their plan will probably meet with little success.
- They didn't have much success in life.
- I didn't have much success in finding a job.
- I'm not having much success in communicating with him at the moment.

Իսկ հետևյալ օրինակներում "success" բառը հանդես է գալիս իր երկրորդ նշանակությամբ, այն է «հաջողություն՝ ճանաչում ունեցող մարդ, գնահատականի՝ հավանության արժանացած գործ, ստեղծագործություն, փորձ, միջոցառում և այլն»՝

- He was a great success as an actor (artist).
- He was not a success as a speaker.
- She wasn't a success as a teacher.
- This work (book) is a success.
- The experiment was a success.
- The party was a big success.
- That salmon dish was a success.
- He was determined to make a success of the business.

### "Success" բառի շարակարգային առանձնահատկությունները

Ինչ վերաբերում է "success" բառի շարակարգային առանձնահատկություններին, ապա լայն գործածություն ունեն "success" գոյականով և գոյական, ածական ու բայ խոսքի մասերով կազմվող հետևյալ բառակապակցությունները՝

academic success /ակադեմիական հաջողության/, amazing success /ապշեցուցիչ հաջողություն/, apparent success /ակնհայտ հաջողություն/, big success /մեծ հաջողություն/, brand (brand's) success /ապրանքանիշի հաջողություն/, brilliant success /փայլուն հաջողություն/, business success /գործարար հաջողություն/, commercial success /առևտրային հաջողություն/, complete success /լիակատար հաջողություն/, considerable success /նշանակալի հաջողություն/, conspicuous success /աչքի ընկնող հաջողություն/, continued success /տևական հաջողություն/, critical success /վճռորոշ հաջողություն/, deserved success /արժանի հաջողություն/, diplomatic success /դիվանագիտական հաջողություն/, divine success /աստվածային հաջողություն/, economic success /տնտեսական հաջողություն/, educational success /կրթական հաջողություն/, electoral success /ընտրական հաջողություն/, enormous success /հսկայական հաջողություն/, entrepreneurial success /ձեռնարկչատիրական հաջողություն/, eventual success /վերջնական հաջողություն/, fabulous success /առասպելական հաջողություն/,

financial success /ֆինանսական հաջողություն/, future success /ապագա հաջողություն/, giddy success /գլխապտույտ հաջողություն/, great success /մեծ հաջողություն/, huge success /մեծագույն հաջողություն/, immediate success /անհետաձգելի հաջողություն/, immense success /անսահման հաջողություն/, incredible success /անհավանական հաջողություն/, initial success /սկզբնական հաջողություն/, instant success /ակնթարթային հաջողություն/, international success /միջազգային հաջողություն/, legislative success /օրենսդրական հաջողություն/, literary success /գրական հաջողություն/, long-term success /երկարաժամկետ հաջողություն/, major success /մեծ հաջողություն/, military success /ռազմական հաջողություն/, notable success /նշանակալի հաջողություն/, outstanding success /աչքի ընկնող հաջողություն/, overall success /համընդհանուր հաջողություն/, partial success /մասնակի հաջողություն/, phenomenal success /բացառիկ հաջողություն/, popular success /համաժողովրդական հաջողություն/, professional success /մասնագիտական հաջողություն/, real success /իրական հաջողություն/, relative success /հարաբերական հաջողություն/, roaring success /աղաղակող հաջողություն/, scientific success /գիտական հաջողություն/, short-term success /կարճաժամկետ հաջողություն/, spectacular success /տպավորիչ հաջողություն/, subsequent success /հետագա հաջողություն/, success rate /հաջողության գործակից/, sudden success /անսպասելի հաջողություն/, surprising success /անակնկալ հաջողություն/, sweet smell of success /հաջողության քաղցր համը/, thorough success /կատարյալ հաջողություն/, total success /լիակատար հաջողություն/, tremendous success /վիթխարի հաջողություն/, ultimate success /վերջնական հաջողություն/, unexpected success /անսպասելի հաջողություն/, unprecedented success /աննախադեպ հաջողություն/, worldwide success /գլոբալ հաջողություն/, amount of success /հաջողության չափը/, degree of success /հաջողության աստիճանը/, the factors to success /հաջողության գործոններ/, the formula of (for) success /հաջողության բանաձև/, the key to success /հաջողության բանալի/, a lack of success /հաջողության պակաս/, the price of success /հաջողության գինը/, the principle of success /հաջողության սկզբունք/, the secret of (to) success /հաջողության գաղտնիք/, a symbol of success /հաջողության խորհրդանիշ/, the ticket to success /հաջողության ուղեգիր/, to achieve success /հասնել հաջողության/, to assess success /գնահատել հաջողությունը/, to attain success /ձեռք բերել հաջողություն/, to be crowned with success /հաջողությամբ պսակվել/, to bring success /բերել հաջողություն/, to celebrate success /նշել հաջողությունը/, to enjoy success /վայելել հաջողությունը/, to ensure success /ապահովել հաջողություն/, to evaluate success /գնահատել հաջողությունը/, to experience success /զգալ հաջողությունը/, to find success /գտնել հաջողություն/, to gauge success /գնահատել հաջողությունը/, to guarantee success /երաշխավորել հաջողություն/, to have success /ունենալ հաջողություն/, to lead to success /հանգեցնել հաջողության/, to maintain

success /պահպանել հաջողությունը/, to measure success /գնահատել հաջողությունը/, to predict success /կանխատեսել հաջողությունը/, to result in success /հանգեցնել հաջողության/, to score a great success /մեծ հաջողության հասնել/, to seek success /ձգտել հաջողության/, to strive for success /ձգտել հաջողության/, to win success /հասնել հաջողության/, to wish somebody success /ինչ-որ մեկին ցանկանալ հաջողություն/ և այլն:

Ժամանակակից անգլերենին բնորոշ այս բառակապակցությունները բնութագրում են հաջողությունը, ձեռքբերումը և արտահայտում հաջողության հասնելու ձգտումն ու զգացումը:

"Success" բառը գործածվում է նաև ասացվածքներում, որտեղ «հաջողությունը» մի դեպքում հանդես է գալիս որպես երևույթ, իսկ մյուս դեպքում որպես հաջողության՝ հաղթանակի հասած անձ՝

- Nothing succeeds like success. /Հաջողությունը հաջողություն է բերում/:
- Success is never blamed. /Հաղթողին չեն դատում: Հաջողակին երբեք չեն կշտամբում/:

Ասացվածքները նույնպես ամբողջացնում են հասկացույթի բովանդակությունը, քանի որ դրանք ազգային լեզվամտածողության և մշակույթի արտացոլումն են:

Դիտարկելով "success" բառի երկու բառարանային նշանակությունները, հարկ է նշել, որ այդ սահմանումները ոչ լիակատար պատկերացում են տալիս բառի խորքային իմաստային բովանդակության մասին: Այդ իսկ պատճառով կարևորվում է "success" լեզվամշակութային հասկացույթի ուսումնասիրությունը:

**"Success" հասկացույթը նշանավոր անձանց խոսքում**

"Success" հասկացույթի բովանդակությանն ու կարևորությանը անդրադարձել են բազմաթիվ նշանավոր անձինք: Բառի խորքային բովանդակությունը կարելի է վեր հանել նրանց առաջարկած սահմանումներում, արտահայտած կարծիքներում և մոտեցումներում, որոնք բացահայտում են հաջողության գաղտնիքը, հաջողության հասնելու ուղիները՝ միաժամանակ ուղղորդելով հաջողության: Քննարկելով այդ սահմանումներում արտահայտվող իմաստային բովանդակությունը, փորձ է արվում ամբողջացնել "success" հասկացույթի լեզվական բնութագիրը:

"Success" լեզվամշակութային հասկացույթի սահմանումներում և մեկնաբանություններում կարևորվում է մասնավորապես անհատի ձգտումը, ջանքերը, աշխատասիրությունը, համբերատարությունը, հետևողականությունը՝ գրանցելու դրական արդյունքներ և հաջողություններ: Լեզվական նյութի ուսումնասիրությունը թույլ է տալիս առաջ

քաշել այն դրույթը, որ հաջողության հնարավոր չէ հասնել առանց ռիսկի դիմելու, խիզախ և վստահ քայլեր կատարելու: Նշանավոր անձանց կողմից “success” հասկացույթի սահմանումը ենթադրում է դժվարությունների և մարտահրավերների հաղթահարում՝ նպատակների իրագործման ճանապարհին: Ժամանակակից աշխարհում ռիսկի դիմելը, ռիսկերի գնահատումն ու կառավարումը ընդհանուր առմամբ հաջողության գրավականն են: Ըստ որոշ կարծիքների, “success” հասկացույթը համարժեք է բարեկեցությանն ու բարգավաճմանը:

“Success” բառն ուսումնասիրելով նշանավոր անձանց խոսքում՝ նկատի է առնվում իրենց սեփական նպատակների կամ առհասարակ համընդհանուր նպատակների իրականացման արդյունքը որպես ցանկացած նախաձեռնության անբաժանելի մաս: Բոլոր ուսումնասիրվող օրինակներում գերակշռում է “success” հասկացույթի դրական ուղղվածությունը որպես առաջընթաց, բարիք, բարեկեցություն, հռչակ, համբավ, գոհունակություն, ինքնավստահություն, խիզախություն, ձեռքբերում, կատարելագործում և այլն:

Այսպիսով, հաշվի առնելով հասկացույթների ուսումնասիրության տեսական հիմքը, քննարկենք “success” լեզվամշակութային հասկացույթի արտահայտած իմաստային բովանդակությունը ամերիկացի և բրիտանացի նշանավոր անձանց խոսքում:

20-րդ դարի կեսերին Մեծ Բրիտանիայի վարչապետ, նշանավոր պետական և քաղաքական գործիչ Ուինսթոն Չերչիլը յուրօրինակ ձևով է սահմանել հաջողության բանաձևը՝ կարևորագույն բաղադրիչ համարելով խանդավառության պահպանումը (without loss of enthusiasm) ձախողումների և անհաջողությունների պարագայում (going from failure to failure):

Success consists of going from failure to failure without loss of enthusiasm. /https://www.brainyquote.com/quotes/winston_churchill_131188/

19-րդ դարի վերջերին Մեծ Բրիտանիայի վարչապետ, ականավոր պետական և քաղաքական գործիչ Բենջամին Դիզրայելին նույնպես անդրադարձել է “success” հասկացույթին: Գործածելով “the secret of success” բառակապակցությունը, նա հաջողության գաղտնիքը համարել է պատրաստ լինելը պատեհ պահին:

The secret of success is to be ready when your opportunity comes. /https://www.brainyquote.com/quotes/benjamin_disraeli_129996/

Բենջամին Դիզրայելին մատնանշել է նաև մեկ այլ որակ՝ համառությունը, հաստատակամությունը (perseverance), որը նույնպես առաջնորդում է հաջողության: Նրա խոսքում գործածվող “to win success” բառակապակցությունը իմաստային առումով համարժեք է “to achieve success” բառակապակցությանը:

Through perseverance many people win success out of what seemed destined to be certain failure. /https://www.brainyquote.com/quotes/benjamin_disraeli_154201?src=t_success/

20-րդ դարի ամերիկացի գրող և հոգեբան Ռոբերտ Կոլիերը կարևորել է շարունակաբար գործադրվող փոքր ջանքերը (small efforts - repeated day in and day out) որպես հաջողություն:

Success is the sum of small efforts - repeated day in and day out. /https://www.brainyquote.com/quotes/robert_collier_108959?src=t_success/

Ռոբերտ Կոլիերը մատնանշել է նաև հաջողության անհրաժեշտ պայմանը՝ ցանկությունը, իղձը (desire), որով սկսվում է ամեն ինչ:

The first principle of success is desire - knowing what you want. Desire is the planting of your seed. /https://www.brainyquote.com/quotes/robert_collier_386892?src=t_success/

Ըստ 19-րդ դարի ամերիկացի գրող և պատմաբան Էդուարդ Հեյլի՝ միավորվելն ու համատեղ աշխատելը արդեն իսկ հաջողություն է: Այստեղ հեղինակը հստակեցնում է հաջողության հասնելու ուղին՝ գործածելով կրկնություն ոճական հնարը (coming together, keeping together, working together): Նրա հաջողության բանաձևը պարզ է և հասանելի բոլոր ժամանակներում:

Coming together is a beginning; keeping together is progress; working together is success. /https://www.brainyquote.com/quotes/edward_everett_hale_121997?src=t_success/

20-րդ դարի ամերիկացի ֆուտբոլիստ և Ֆուտբոլի ազգային լիգայի պատմության լավագույն և ամենահաջողակ մարզիչներից մեկը՝ Վինսենթ Լոմբարդին, որի կարիերայում հաջողությունն է մշտապես ուղեկից եղել, հաջողությունը սահմանել է որպես աշխատասիրություն, նվիրվածություն և վճռականություն (hard work, dedication, determination): Գործածելով “the price of success” բառակապակցությունը, նա ներկայացրել է հաջողության այդ երեք անհրաժեշտ բաղադրիչները:

The price of success is hard work, dedication to the job at hand, and the determination that whether we win or lose, we have applied the best of ourselves to the task at hand. /https://www.brainyquote.com/quotes/vince_lombardi_ 125250?src=t_success/

19-րդ դարի ամերիկացի գրող Օրիսոն Սուեթ Մարդենի ստեղծագործությունների գլխավոր թեման հաջողությունն է անհատի կյանքում: Նա բազմիցս անդրադարձել է հաջողակ կյանքով ապրելու սկզբունքներին և արժանիքներին, զարգացրել հաջողության հասնելու փիլիսոփայական հիմքերը: 1897 թվականին դոկտոր Օ. Մարդենը նույնիսկ հիմնել է *SUCCESS* անվանումը կրող ամսագիր: Նրա հաջողության բանաձևը դիմակայելու և պայքարելու խիզախությունն է (the courage with which you have maintained the struggle):

Success is not measured by what you accomplish, but by the opposition you have encountered, and the courage with which you have maintained the struggle against overwhelming odds. /https://www.brainyquote.com/quotes/orison_ swett_marden_166019?src=t_success/

19-րդ դարի իռլանդացի նշանավոր գրող, դրամատուրգ Օսկար Ուայլդը յուրօրինակ կերպով է սահմանել հաջողությունը: Ըստ նրա հաջողությունը գիտություն է (Success is a science), եթե կան նախադրյալները, ապա հաջողությունը հասանելի է:

Success is a science; if you have the conditions, you get the result. /https://www.brainyquote.com/quotes/oscar_wilde_125125?src=t_success/

ԱՄՆ 26-րդ նախագահ, քաղաքական գործիչ, գրող Թեոդոր Ռուզվելտը հաջողության միակ և ամենակարևոր բաղադրիչ է համարել մարդկանց հետ համակերպվելը (knowing how to get along with people): Գործածելով "the formula of success" բառակապակցությունը, նա ներկայացրել է հաջողության պարզ, հստակ և շատ կարևոր մի բանաձև, որն արդիական է բոլոր ժամանակներում:

The most important single ingredient in the formula of success is knowing how to get along with people. /https://www.brainyquote.com/quotes /theodore_roosevelt_122116?src=t_success/

Մեծ Բրիտանիայի առաջին կին վարչապետ, պահպանողական կուսակցության առաջնորդ, նշանավոր պետական և քաղաքական գործիչ Մարգարետ Թեթչերը հաջողության հասնելու համար կարևորել է աշխատանքը արդյունավետ կատարելու շնորհքը (a flair for the thing that you are doing), քրտնաջան աշխատանքը (hard work) և նպատակի զգացումը (sense of purpose):

What is success? I think it is a mixture of having a flair for the thing that you are doing; knowing that it is not enough, that you have got to have hard work and a certain sense of purpose. /https://www.brainyquote.com/quotes/margaret_thatcher_114266?src=t_success/

Ամերիկացի նշանավոր կինոդերասանուհի, մոդել և երգչուհի Մերիլին Մոնրոն յուրօրինակ կերպով է մեկնաբանել հաջողության թեման՝ անդրադառնալով շրջապատի բացասական տրամադրվածությանը հաջողություն ունեցողի հանդեպ: Գործածելով "to enjoy success" բառակապակցությունը, նա կարևորել է հաջողությունը վայելելը՝ խուսափելով շրջապատող մարդկանց նախանձից:

Success makes so many people hate you. I wish it wasn't that way. It would be wonderful to enjoy success without seeing envy in the eyes of those around you. /https://www.brainyquote.com/quotes/marilyn_monroe_499749?src=t_success/

20-րդ դարի ամերիկացի պոետ, Պուլիցերյան մրցանակի դափնեկիր Հոուարդ Նեմերոֆը գործածելով "the secrets of success" բառակապակցությունը, սահմանում է հաջողության երկու բաղադրիչները՝ լավ կին և կայուն աշխատանք ունենալը (a good wife and a steady job):

The secrets of success are a good wife and a steady job. My wife told me.

/https://www.brainyquote.com/quotes/howard_nemerov_392251?src=t_success/

Ամերիկացի արդյունաբերական և բիզնես մագնատ, Ֆորդ Մոթոր ընկերության հիմնադիր Հենրի Ֆորդը կարևորել է միասնական ուժերով առաջ ընթանալը (moving forward together): Նրա կարծիքով այդ պարագայում հաջողությունն ինքնին առկա է:

If everyone is moving forward together, then success takes care of itself. /https://www.brainyquote.com/quotes/henry_ford_384400?src=t_success/

Ամերիկացի գրող, դասախոս, միջանձնային հարաբերությունների, հանրային ճարտասանության և կորպորատիվ հմտությունների գիտակ Դեյլ Քարնեգին կարծում է հաջողությունն այն է, ինչ մարդ ուզում է ստանալ, իսկ երջանկությունը ցանկանալն է այն, ինչ ինքը ստանում է:

Success is getting what you want. Happiness is wanting what you get. /https://www.brainyquote.com/quotes/dale_carnegie_108922?src=t_success/

Գործածելով “achieve success” բառակապակցությունը, Դեյլ Քարնեգին շեշտում է նախընտրած գործով զբաղվելու կարևորությունը՝ հաջողության հասնելու համար:

You never achieve success unless you like what you are doing. /https://www.brainyquote.com/quotes/dale_carnegie_130706?src=t_success/

Նա միաժամանակ նշում է, որ հաջողության ճանապարհին ձախողումներն ու հուսալքությունն անխուսափելի են:

Develop success from failures. Discouragement and failure are two of the surest stepping stones to success. /https://www.brainyquote.com/quotes/dale_carnegie_130712?src=t_success/

Ամերիկացի բասկետբոլիստ և մարզիչ, բասկետբոլի փառքի սրահի անդամ Ջոն Վուդենը հաջողությունը սահմանում է որպես մտքի խաղաղություն (peace of mind), որին մարդը հասնում է ջանք գործադրելով (you made the effort) և զգալով ինքնաբավարարվածություն (a direct result of self-satisfaction):

Success is peace of mind, which is a direct result of self-satisfaction in knowing you made the effort to become the best of which you are capable. /https://www.brainyquote.com/quotes/john_wooden_447013?src=t_success/

Ամերիկացի փաստաբան, ԱՄՆ 44-րդ նախագահ Բարաք Օբամայի կինը՝ Միշել Օբաման հաջողության գրավական է համարում վստահությունն ու տոկունությունը (your success will be determined by your own confidence and fortitude):

Whether you come from a council estate or a country estate, your success will be determined by your own confidence and fortitude. /https://www.brainyquote.com/quotes/michelle_obama_415511?src=t_success/

Միշել Օբաման նաև նշում է, որ Բարաք Օբամայի համար հաջողությունը՝ մարդկանց կյանքում փոփոխություն բերելն է (it’s about the difference you make in people’s lives):

For Barack, success isn't about how much money you make. It's about the difference you make in people's lives. /https://www.globalexperiences.com/blog/successful-people-define-success/

Հաջողության գաղտնիքը (the secret to success) յուրօրինակ կերպով է մեկնաբանել իռլանդական ծագումով անգլիացի դրամատուրգ Ջորջ Բեռնարդ Շոուն: Նա նկատի է ունեցել, որ հաջողության հասնելու խիզախ գործողությունները, ոչ ավանդական գաղափարները գրգռում և վշտացնում են շատերին (offend the greatest number of people):

The secret to success is to offend the greatest number of people. /https://www. brainyquote.com/quotes/george_bernard_shaw_383449?src=t_success/

Ըստ 20-րդ դարի ամերիկացի գործարար և բարերար Վիլյամ Կլեմենտ Ստոունի չպետք է դադարել փորձել (try and keep trying)՝ հասնելու հաջողության և պահպանելու հաջողությունը (success is achieved and maintained):

Success is achieved and maintained by those who try and keep trying. /https://www.brainyquote.com/quotes/w_clement_stone_193776?src=t_success/

Ամերիկացի արդյունաբերող, միլիարդատեր, նավթային ընկերության սեփականատեր Փոլ Գեթին սահմանել է հաջողության բանաձևը (formula for success) ընդամենը երեք քայլով (rise early, work hard, strike oil): Նա գործածում է "strike oil" արտահայտությունը, որը բնորոշ է խոսակցական անգլերենին և նշանակում է «հարստանալ կամ հաջողակ դառնալ»:

Formula for success: rise early, work hard, strike oil. /https://www. brainyquote.com/quotes/j_paul_getty_100065?src=t_success/

19-րդ դարի ամերիկացի մանկավարժ, փիլիսոփա և բանաստեղծ Էյմոս Բրոնսոն Օլքոթը նշում է հաջողության քաղցրության մասին (success is sweet and sweeter), որը մարդիկ ճաշակում են անցնելով պայքարի և պարտությունների բարդ ճանապարհը (through many struggles and defeats):

Success is sweet and sweeter if long delayed and gotten through many struggles and defeats. /https://www.brainyquote.com/quotes/amos_bronson_alcott_ 148606?src=t_success/

Ամերիկյան "Chrysler" ընկերության հիմնադիր Ուոլթեր Քրայսլերը սահմանել է հաջողության իրական գաղտնիքը (the real secret of success)՝ միակ և կարևորագույն բաղադրիչ համարելով խանդավառությունը (enthusiasm):

The real secret of success is enthusiasm. /https://www.brainyquote.com/quotes/walter_chrysler_183234?src=t_success/

Ամերիկացի երգահան և քնարերգու Իրվինգ Բեռլինը իր սահմանման մեջ փաստացի օգտագործում է "success" բառի երկու նշանակությունները, նախ նա նկատի է ունենում հաջողությունը որպես ձեռքբերում, ապա որպես հաջողություն՝ ճանաչում ունեցող մարդ (you've got to keep on being a success):

The toughest thing about success is that you've got to keep on being a success. /https://www.brainyquote.com/quotes/irving_berlin_107992?src=t_success/

Ամերիկացի ֆուտբոլիստուհի, ԱՄՆ ֆուտբոլի կանանց հավաքականի խաղացող Միա Հեմմը կիրառելով կրկնություն ոճական հնարը՝ նշել է հաջողության շարունակականության մասին՝ հաջողությունը ծնում է հաջողություն:

Success breeds success. /https://www.brainyquote. com/ quotes/mia_ hamm_204533?src=t_success/

Ամերիկացի պոետ, քնարերգու Սիդնեյ Մադուեդը գործածելով “successful” ածականը (be truly successful) և “success” գոյականը (your success will blossom)՝ մի շարք գործնական խորհուրդներ է տալիս՝ հորդորելով ցուցաբերել հաստատակամություն, որի արդյունքում հաջողությունը կծաղկի և կբարգավաճի:

If you want to be truly successful invest in yourself to get the knowledge you need to find your unique factor. When you find it and focus on it and persevere your success will blossom. /https://www.brainyquote.com/quotes/ sydney_madwed_157803?src=t_success/

20-րդ դարի ամերիկացի հաջողակ գործարար, միլիարդատեր Հարոլդ Ջինինը սահմանել է հաջողության հինգ կարևորագույն ձեռնարկչատիրական հմտությունները՝ կենտրոնացում, խորաթափանցություն, կազմակերպվածություն, նորարարություն և հաղորդակցում (concentration, discrimination, organization, innovation and communication):

The five essential entrepreneurial skills for success: Concentration, Discrimination, Organization, Innovation and Communication. /https://www. brainyquote.com/quotes/harold_s_geneen_162897?src=t_success/

20-րդ դարի անգլիացի գրող և գրաքննադատ Սայրլ Կոնոլին որպես հաջողության գաղտնիք (the secret of success) համարում է ներդաշնակությունն (to be in harmony with existence) ու հանգստությունը (to be always calm):

The secret of success is to be in harmony with existence, to be always calm to let each wave of life wash us a little farther up the shore. /https://www. brainyquote.com/quotes/cyril_connolly_122125?src=t_success/

Ամերիկացի գրող Նապոլեոն Հիլլը համարվում է հաջողության մասին գրած ամենահայտնի հեղինակներից մեկը: Նա գտնում է, որ հաջողության անհրաժեշտ բաղադրիչներն են համբերատարությունը, հաստատակամությունը և քրտինք թափելը (patience, persistence and perspiration):

Patience, persistence and perspiration make an unbeatable combination for success. /https://www.brainyquote.com/quotes/napoleon_hill_152875/

Նապոլեոն Հիլլը նաև խորհուրդ է տալիս զգուշորեն ընտրել բառերը, քանի որ դրանք սերմանում են հաջողություն կամ ձախողում (will plant the seed of either success or failure):

Think twice before you speak, because your words and influence will plant the seed of either success or failure in the mind of another. /https://www.brainyquote.com/quotes/napoleon_hill_393807?src=t_success/

Անգլիացի նշանավոր գրող, բազմաթիվ վեպերի, պատմվածքների և պիեսների հեղինակ Սոմերսեթ Մոեմը կարծում է, որ հաջողությունը մարդկանց դարձնում է խոնարհ, հանդուրժող և բարի (humble, tolerant and kind):

The common idea that success spoils people by making them vain, egotistic and self-complacent is erroneous; on the contrary it makes them, for the most part, humble, tolerant and kind. /https://www.brainyquote.com/quotes/w_ somerset_maugham_121164?src=t_success/

«Ֆորբս» ամսագրի հիմնադիր, շոտլանդական ծագումով ամերիկացի լրագրող Բերթի Չարլզ Ֆորբսը կարծում է, եթե մարդ ամեն ջանք թափել է, նա գնահատականի՝ հավանության է արժանի (the man who has done his level best is a success):

The man who has done his level best... is a success, even though the world may write him down a failure. /https://www.brainyquote.com/quotes/b_c_forbes_108000?src=t_success/

ԱՄՆ 40-րդ նախագահ Ռոնալդ Ռեյգանը խոսում է սոցիալական բարեկեցության ծրագրի հաջողության մասին (measure welfare's success), եթե գնալով ավելի քիչ մարդ է ցանկանում այդ ծրագրից օգտվել:

We should measure welfare's success by how many people leave welfare, not by how many are added. /https://www.brainyquote.com/quotes/ronald_reagan_183978?src=t_success/

20-րդ դարի ամերիկացի գործարար, ԱՄՆ-ում բազմաթիվ հայտնի շինությունների ճարտարապետ Չարլզ Լաքմանը սահմանել է հաջողության երեք կարևոր գործոնները՝ ընդունակություն, հնարավորություն և համարձակություն (ability, breaks, and courage): Ընդունակություններն ու հմտությունները թույլ են տալիս հասնել նպատակների իրականացմանը, հնարավորությունները օգտվելու առիթ են, իսկ համարձակությունը ենթադրում է վճռականություն, խիզախություն և պատրաստակամություն ռիսկի դիմելու, մարտահրավերները հաղթահարելու և հաջողության հասնելու համար:

Success is that old ABC - ability, breaks, and courage. /https://www.brainyquote.com/quotes/charles_luckman_101797?src=t_success/

Բրիտանացի մեծահարուստ, հայտնի գործարար, “Virgin Group” ընկերության հիմնադիր Ռիչարդ Բրենսոնը գործածելով “measure success” բառակապակցությունը, երջանկությունն է համարում իրական հաջողություն (true success should be measured by how happy you are):

Too many people measure how successful they are by how much money they make or the people that they associate with. In my opinion, true success

should be measured by how happy you are. /https://www.globalexperiences.com/blog/successful-people-define-success/

Աշխարհի ամենահարուստ մարդկանցից մեկը, ամերիկացի բիզնես մագնատ Ուորեն Բաֆեթը գործածելով “measure success” բառակապակցությունը, հաջողությունը համարում է այն, թե որքան մարդ է իրեն սիրում՝ գնահատում:

I measure success by how many people love me. /https://www.globalexperiences.com/blog/successful-people-define-success/

Ամերիկացի խոշորագույն գյուտարար, գործարար՝ էլեկտրական լամպի, ձայնագրիչի և մի շարք այլ գյուտերի հեղինակ Թոմաս Էդիսոնի հաջողության բանաձևն էր ոգեշնչումն ու քրտնաջան աշխատանքը:

Success is 1% inspiration, 99% perspiration. /https://www.global experiences. com/blog/successful-people-define-success/

Ամերիկացի մանկավարժ Ժեմ Էսկալանտը գործածելով “the ticket to success” բառակապակցությունը, կրթությունը համարել է որպես հաջողության ուղեգիր:

Education is the ticket to success. /https://quotefancy.com/quote/1755948/Jaime-Escalante-Education-is-the-ticket-to-success/

Ամերիկացի քաղաքական գործիչ Սոլոմոն Օրտիզը նույնպես կարևորել է կրթության դերը որպես հաջողության բանալի՝ “the key to success”, միաժամանակ չմոռանալով շեշտել ուսուցիչների կատարած կարևոր դերը:

Education is the key to success in life, and teachers make a lasting impact in the lives of their students. /https://www.brainyquote.com/quotes/ solomon_ortiz_346229/

ԱՄՆ պետական գործիչ, դիվանագետ, նախկին պետքարտուղար Քոլին Փաուելը իր հաջողության բանաձևը չի համարել որպես հաջողության գաղտնիք՝ “there are no secrets to success”: Նա պարզապես կարևորել է պատրաստվածությունը, քրտնաջան աշխատանքը և ձախողումից դասեր քաղելը (preparation, hard work, and learning from failure):

There are no secrets to success. It is the result of preparation, hard work, and learning from failure. /https://www.pinterest.com/pin/motivational-business-quotes--480196379026993226/

Ամփոփելով վերոնշյալը՝ հարկ է նշել, որ “success” հասկացույթի բնութագրին անդրադարձել են բրիտանացի և ամերիկացի նշանավոր պետական և քաղաքական գործիչներ: Նրանք խանդավառությունը, պատրաստվածությունը, աշխատասիրությունը, հաստատակամությունն ու հետևողականությունը համարում են հաջողության կարևոր բաղադրիչներ: Մի շարք ամերիկացի գրողներ կարևորում են շարունակաբար գործադրվող ջանքերը, համատեղ աշխատանքը, հետևողական ու համարձակ պայքարը որպես հաջողության գրավական: Բրիտանացի գրողների կարծիքով հաջողությունը հասանելի է անհրաժեշտ պայ-

մանների, նախադրյալների առկայության պարագայում: Հաջողության հասնելու ճանապարհին կարևորագույն գործոններ են համարվում միջանձնային հարաբերությունները և մարդկային շփումը: Այս կարծիքն են կիսում ամերիկացի պետական գործիչներ և գրողներ: Ամերիկացի խոշոր գործարարների և արդյունաբերողների մեծամասնությունը շեշտում են միասնական աշխատանքը, աշխատասիրությունը, խանդավառությունը, կազմակերպվածությունն ու խիզախությունը որպես հաջողության բաղադրիչներ: Նշանավոր անձինք բնութագրելով "success" հասկացույթը՝ անդրադարձել են նաև հաջողության մի շարք բացասական միտումներին, ինչպիսիք են՝ շրջապատի նախանձը, գրգռվածությունը, իսկ հաջողության ճանապարհին՝ հուսալքությունն ու ձախողումները:

## Եզրակացություն

Այսպիսով, ժամանակակից աշխարհում յուրաքանչյուր անհատ "success" հասկացույթը ընկալում, դիտարկում և մեկնաբանում է իր կենսական առաջնահերթություններով պայմանավորված: Հոդվածում ուսումնասիրվում է "success" լեզվամշակութային հասկացույթի իմաստային բովանդակությունը, որն արտացոլվում է մի շարք նշանավոր անձանց արտահայտած կարծիքներում և մոտեցումներում: Ներկայացնելով այդ կարծիքներն ու տեսակետները, հոդվածում քննարկվում և վեր են հանվում "success" հասկացույթի ճանաչողական հատկանիշները, հաջողության բանաձևերը և հաջողության հասնելուուղիները:

## Գրականություն

Воркачев, С. Г. (2002). Методологические основания лингвоконцептологии. *Теоретическая и прикладная лингвистика.* Вып. 3. Аспекты метакоммуникативной деятельности. Воронеж, ВГУ.

Ефремов, В. А. (2009). Теория концепта и концептуальное пространство. *Известия Российского государственного педагогического университета им. А.И. Герцена.* Вып. 104. Санкт-Петербург: РГПУ.

Карасик, В. И. (2002). *Языковой круг: личность, концепты, дискурс.* Волгоград: Перемена.

Карасик, В. И. (1991). *Язык социального статуса.* Москва, Институт языкознания АН СССР.

Кубрякова, Е. С. (2004). *Язык и знание: На пути получения знаний о языке.* Москва, Языки славянской культуры.

Маслова, В. А. (2001). *Лингвокультурология.* Москва, Академия.

Попова, З. Д., Стернин, И. А. (2007). *Когнитивная лингвистика.* Москва, Восток – Запад.

## Օգտագործված աղբյուրներ

https://www.brainyquote.com/quotes/winston_churchill_131188
https://www.brainyquote.com/quotes/benjamin_disraeli_129996
https://www.brainyquote.com/quotes/benjamin_disraeli_154201?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/robert_collier_108959?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/robert_collier_386892?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/edward_everett_hale_121997?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/vince_lombardi_125250?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/orison_swett_marden_166019?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/oscar_wilde_125125?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/theodore_roosevelt_122116?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/margaret_thatcher_114266?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/marilyn_monroe_499749?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/howard_nemerov_392251?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/henry_ford_384400?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/dale_carnegie_108922?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/dale_carnegie_130706?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/dale_carnegie_130712?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/john_wooden_447013?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/michelle_obama_415511?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/george_bernard_shaw_383449?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/w_clement_stone_193776?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/j_paul_getty_100065?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/amos_bronson_alcott_148606?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/walter_chrysler_183234?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/irving_berlin_107992?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/mia_hamm_204533?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/sydney_madwed_157803?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/harold_s_geneen_162897?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/cyril_connolly_122125?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/napoleon_hill_152875
https://www.brainyquote.com/quotes/napoleon_hill_393807?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/w_somerset_maugham_121164?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/b_c_forbes_108000?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/ronald_reagan_183978?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/charles_luckman_101797?src=t_success
https://www.brainyquote.com/quotes/solomon_ortiz_346229
https://www.globalexperiences.com/blog/successful-people-define-success
https://quotefancy.com/quote/1755948/Jaime-Escalante-Education-is-the-ticket-to-success
https://www.pinterest.com/pin/motivational-business-quotes--48019637902699322

## Օգտագործված բառարաններ

*New Webster's Dictionary and Thesaurus of the English Language* (1992). USA, Lexicon Publications, Inc..

*Oxford Advanced Learner's Dictionary* (2010), 8th edition. Oxford, Oxford University Press.

*Oxford Collocations Dictionary for Students of English* (2009), 2nd edition. Oxford, Oxford University Press.

*The BBI Combinatory Dictionary of English* (1990). Москва, Русский язык.

Ասմանգուլյան, Հ. Ա., Հովհաննիսյան, Մ. Ի. (1991). *Անգլերեն-հայերեն բառարան:* Երևան, Հայաստան հրատարակչություն:

Բարաթյան, Ն.Ռ. (2011). *Անգլերեն-հայերեն բառարան:* Երևան, ԵՊՀ հրատարակչություն:

Սեֆերյան, Ս., Լազարյան, Ա. (1992): *Իմաստախոս ժողովուրդը: Անգլերեն-հայերեն ասացվածքներ և պատկերավոր արտահայտություններ:* Երևան, Սահակ Պարթև:

Гальперин, И. Р., Медникова, Э. М. (1988). *Большой англо-русский словарь.* Том II. М., Русский язык.

Кунин, А. В. (1955). *Англо-русский фразеологический словарь.* М., Государственное издательство иностранных и национальных словарей. https://dictionary.cambridge.org/dictionary/english/success

***Z. Vartapetian – The content of the cultural-linguistic concept of "success" in English.*** – The paper discusses the role and significance of the term "concept" in modern linguistics. Taking into account the theoretical basis of the study of concepts, this paper discusses the semantic content of the cultural-linguistic concept of "success". The material of the research is the interpretations of the concept of "success" by famous American and British people of different times. As a result of the study, the semantic content of the cultural-linguistic concept of "success" has been revealed implying a number of characteristic features, such as self-confidence, courage, perseverance, consistency, etc., which ensure well-being, fame and prosperity. The identification of the semantic content of the concept of success is based on the study of the syntagmatic analysis of the word "success" and the cognitive features of the concept.

***Key words:*** concept of success, cultural-linguistic concept, dictionary definition, semantic content, syntagmatic peculiarities, cognitive features, the formula of success

***З. Вартапетян – Содержание лингвокультурологического концепта «успех» в английском языке.*** – В данной статье рассматривается роль и значение понятия «концепт» в современном языкознании. Принимая во внимание теоретическую основу исследования концептов в целом, в данной статье рассматривается смысловое содержание лингвокультурологического

концепта «успех». Материалом исследования послужили словарные дефиниции слова «успех», а также интерпретации концепта «успех» известными американскими и британскими деятелями разных эпох. В результате исследования выявлена смысловая характеристика лингвокультурологического концепта «успех», предполагающая наличие ряда характерных особенностей, таких как уверенность в себе, смелость, настойчивость, последовательность и т. п., которые обеспечивают благополучие, славу и процветание. Анализ словарных значений и определений слова «успех» и выявление смыслового содержания лингвокультурологического концепта «успех» основаны на изучении синтагматических особенностей слова «успех» и анализ когнитивных признаков концепта.

***Ключевые слова:*** концепт «успех», лингвокультурологический концепт, словарное определение, семантическое содержание, синтагматические особенности, когнитивные признаки, формула успеха